ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 27-Լ

«05» 04 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանով հաստատված 2-րդ հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 5-րդ գլխի 26-րդ կետում «Վարչության մասնագետ՝ 2» բառերը փոխարինել «Վարչության մասնագետ՝ 1» բառերով, իսկ «Ընդամենը՝ 9» բառերը փոխարինել «Ընդամենը՝ 8» բառերով, 20-րդ գլխի 63-րդ կետում «Բաժնի մասնագետ՝ 1» բառերը ուժը կորցրած ճանաչել, իսկ «Ընդամենը՝ 3» բառերը փոխարինել «Ընդամենը՝ 2» բառերով, 22-րդ գլխի 67-րդ կետում «Բաժնի գլխավոր մասնագետ՝ 6» բառերը փոխարինել «Բաժնի գլխավոր մասնագետ՝ 4» բառերով, իսկ «Ընդամենը՝ 7» բառերը փոխարինել «Ընդամենը՝ 5» բառերով:

2. Հավելվածում լրացնել նոր 11.1-ին գլխով հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 11.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

44.1	Բաժնի պետ	1

44.2	Բաժնի գլխավոր իրավաբան	1
44.3	Բաժնի գլխավոր իրավաբան	1
44.4	Բաժնի ավագ իրավաբան	1
Ընդամենը		4

»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ